

Չեխովը և հայ գրականությունը

Լև Տոլստոյը, կամենալով շեշտել Չեխովի մեծ հմայքը, գրում է , որ գերմանացի սիրահար պատանին ամենաթանկ նվերն իր սիրած օրիորդին համարել է Չեխովի գիրքը:Իսկ ինչու՞ ... քանի որ մեծ գրողն օգնել և օգնում է հասկանալ, որ՝

<<Մարդը որքան ավելի բարձր է մտավոր ու բարոյական զարգացումով,այնքան նա ավելի ազատ է, այնքան կյանքն ավելի շատ է բավականություններ պատճառում նրան >>:

<<Դաստիարակված մարդիկ հարգում են մարդկային անհատականությունը, ուստի միշտ ներողամիտ են, մեղմ , քաղաքավարի >>:

<<Քանի դեռ երիտասարդ եք, ուժեղ, կայտառ, մի՛ ծուլացեք բարիք գործել >>:

<<Մարդն իրեն պետք է ավելի բարձր համարի առյուծներից, վագրերից,աստղերից, բարձր այն ամենից ,ինչ հասանելի է և հրաշք է թվում:Հակառակ դեպքում դա ոչ թե մարդ է ,այլ մուկ , որն ամեն ինչից վախենում է >>:

19-րդ դարի ռուս գրականության մեջ **Չեխովի** ստեղծագործությունները առանձնահատուկ տեղ ունեն:Նրանով, կարելի է ասել, ավարտվում է ռուս գրակա-նության այդ դարը և սկսվում է նոր՝ 20-րդ դարի գրականությունը:

Գրողին ուղղակի իմաստով վստահվեց Դոստոևսկու և Տոլստոյի հաջորդը կոչվելու պատիվը,չնայած նա շատ համեստ կարծիք ուներ իր մասին.նրան թվում էր, թե իր գործերը կկարդան ևս մի քանի տարի և... կմոռանան:Բայց ժամանակը հաստատեց նրա ստեղծագործությունների հավերժական արժանիքները:

Ա.Պ.Չեխովը ծնվել 1860թ. հունվարի 29-ին Տագանրոգ քաղաքում: Հայրը ճորտ գյուղացու զավակ էր: Խստիվ հետևելով իր երեխաների քայլերին՝ կիրառում էր դաստիարակչական ամենավայրագ մեթոդները:Նրանց պարտադրում էր հաճախել եկեղեցի և ճշտությամբ կատարել կրոնական բոլոր ծիսակատարությունները: Լինում էին օրեր , երբ նա ,զայրույթով լցված, ծեծում էր նրանց:

Մի խոսքով Նրա մանկությունը տառապանք էր:

Ուսումը շարունակում էր Տագանրոգի գիմնազիայում,որտեղ դասավանդում էին հին հունարեն և հին լատիներեն:

Պատանեկության տարիներին գրողի սիրելի հեղինակներից են եղել Վ.Հյուգոն,Տուրգենևը,Շեքսպիրը, Մերվանտեսը և շատ ու շատ այլ հեղինակներ: Ուսանողական տարիներին գրում էր բազմաթիվ երգիծական ակնարկներ և տպագրում Անտոշա Չեխունտե մականունով:

Ժամանակի ընթացքում գրական-ստեղծագործական աշխատանքը նրա համար դառնում է կենսական պահանջ: Նա սկսում է ավելի մեծ ուշադրությամբ դիտել ծանր իրականությունը և ավելի լավ տեսնել իրական կյանքի հակասական երանգները: Այժմ արդեն չէր կարողանում սառնասիրտ անցնել աղաղակող հակասությունների կողքով. Նա չէր կարողանում իր հույզերն ու ապրումները:

Չեխովը սկսում է առանձին սիրով և կլանված ընթերցել Սալտիկով –Շչեդրինի ցասումնալից գործերը:

Չեխովը գրում է. «Այլևս չէի ցանկանում թռուցիկ կերպով կամ անճիշտ գույներով նկարագրել կյանքի բնորոշ հատկանիշները և ներհակությունները: Գրիչը հեղինակի ձեռքին ն'վրձին է, և՛ սուր: Արձանագրելով իրական փաստերը՝ գրողը միաժամանակ մերկացնում և դատափետում է իրականության խոցելի կողմերը >>: Պատմվածքների առաջին գիրքը՝ «Մելպոմենայի հեքիաթները», տպագրվել է 1884 –ին: Դրան հաջորդեցին «Անմեղ խոսքեր >> և «Մռայլ մարդիկ» ժողովածուները: 1890-ին Չեխովը , որն արդեն հայտնի էր և՛ որպես գրող, և՛ որպես բժիշկ, մեկնում է Սախալին կղզի: Արդարամիտ գրողը գրում է ,որ Սախալինը անտանելի տառապանքների մի վայր է , որտեղ ուղարկում էին ըմբոստացող գործիչներին և քրեական հանցագործներին: Հաղթահարելով բազմաթիվ խոչընդոտներ՝ նա տեսնում է արքայականներին , գրի առնում արտառոց ու սուսկալի փաստեր:

Վերադառնալուց հետո էլ չէր կարողանում մոռանալ այն ամենը, ինչ տեսել էր այնտեղ: 1890-1900-ական թթ. Չեխովը մի քանի անգամ մեկնել է արտասահման: Մերպոլիտովի նահանգում գնել է Մելիխովո կալվածքը և որպես բժիշկ օգնել գյուղացիներին , կառուցել դպրոցներ տարբեր վայրերում: Խոլերայի համաճարակի ժամանակ աշխատել որպես տեղամասային բժիշկ:

Գրողը գտնում էր , որ ընդհանուր բարեկեցությանը ծառայելու ցանկությունը անպայման պետք է լինի հոգու պահանջմունք , անձնական երջանկության պայման: Կյանքում կա միայն 1 աներկբայելի երջանկություն՝ **ապրել ուրիշի համար:** Մարդը պետք է գործ անի , աշխատի քափ ու քրտինքի մեջ , ով էլ որ նա լինի: Եվ միայն դրանում է կյանքի իմաստն ու նպատակը:

Անտարբերությունը հոգու ծանր հիվանդությունն է: Հարկավոր են խելացի , կրթված մարդիկ:

Պետք է ձգտել այն բանին , որ յուրաքանչյուր ոք տեսնի և իմանա ավելի շատ , քան տեսել ու իմացել են նրա հայրն ու պապը:

1900-ին նրան շնորհեցին պատվավոր ակադեմիկոսի տիտղոս, որից կարճ ժամանակ անց հրաժարվեց , քանի որ Նիկոլայ II-ը չեղյալ էր համարել Մ. Գորկու՝ պատվավոր ակադեմիկոս ընտրվելը:

Ծանր տարիներ էին Ռուսաստանում: Մարդիկ վախենում էին բարձրաձայն խոսել, նամակներ ուղարկել, գրքեր կարդալ, օգնել հիվանդներին ,քանի որ կամավոր լրտեսներ ու մատնիչներ կային թե՛ քաղաքներում , թե՛ գյուղերում: Դրանք նման էին **<<Պատյանով մարդը>> պատմվածքի հերոսին:**

<<Չինովնիկի մահը>>պատմվածքում չինովնիկը թատրոնում պատահաբար փոշտում է , ու նրա թուքը ցայտում է առջևում նստած գեներալի ճաղատ գլխի վրա: Եվ ահա այստեղ էլ երևում է չինովնիկի զգվելի քծնանքը, նրա վախը գեներալի առաջ:

Նրան այդպես էր դարձրել կյանքը:

Չեխովին միշտ հուզել է երեխաների ճակատագիրը, հատկապես ժողովրդի ծոցից դուրս եկածների: Անօգնական երեխաների նա հանդիպել էր իր մանկության տարիներին, երբ իր հետ միասին աշխատում էին հոր խանութում:

1896թ.-ի հոկտեմբերին <<Ճայր>> պիեսի ներկայացումը Պետերբուրգում ձախողվեց: Նրա էությունը չէին հասկացել ո՛չ դերասանները, ո՛չ ռեժիսորները և ոչ էլ հանդիսատեսը: Մեկնեց Մեյիխովո հիասթափված:

1898-ին <<Ճայր>> այս անգամ բեմադրվեց Մոսկվայի գեղարվեստական թատրոնում: Ավարտին դահլիճը լուռ էր: Հանկարծ լսվում է լացի ձայն: ԵՎ հրաշք... դահլիճը պոռթկաց հառաչանքով ու ծափահարություններով: Բոլորը համբուրվում էին:

Գրողը հետագայում Նեմիրովիչ –Դանչենկոյին նվիրեց մեղալեռն ,որի վրա փորագրված էր.<<**Դու իմ պիեսը կյանքի կոչեցիր:Շնորհակալություն>>:**

Չեխովը իր հերոսի` բժիշկ Աստրովի շուրթերից հնչեցնում է .

<<Մարդու մեջ ամեն ինչը պետք է լինի գեղեցիկ` թե՛ դեմքը , թե՛ հագուստը , թե՛ հոգին , թե՛ մտքերը>>:

Չեխովի պատմվածքները դասական իմաստով վերջ չունեն: ԵՎ ինչպե՞ս նա կարող է անտարբեր դիտել կյանքը, երբ նրա գրվածքներում պատկերված են կյանքի թախիժն ու տրտմությունը: Տառապանքից ազատվելու միակ միջոցը կյանքի վերափոխումն է: Նրա հերոսները փորձում են վերագտնել կորցրածը: Նրանք ճիգեր են գործադրում կյանքը շտկելու և արժանավայել ապրելու համար:

Այդպես է „Շնիկով տիկինը „պատմվածքում , որտեղ հանկարծակի ծնված սերը փրկություն չի բերում , քանի որ չափազանց բարդ ու խճճված է կյանքը: Պատմվածքներից մեկում կարդում ենք.<<Պետք է ,որ յուրաքանչյուր գոհ, երջանիկ մարդու դռան հետևում կանգնի որևէ մեկը` մուրճը ձեռքին և թակոցով շարունակ հիշեցնի ,որ կան դժբախտներ , որ ինչքան էլ երջանիկ լինի , կյանքը վաղ թե ուշ ցույց կտա իր մագիլները . կլինեն հիվանդություն, աղքատություն, կորուստներ, և նրան ոչ ոք չի լսի, ինչպես հիմա ինքը չի լսում ոչ ոքի :

Սակայն մուրճը ձեռքին մարդը չկա...>>:

Սա մեծ գրողի մեծ երազանքն էր :

Չեխովը գրում է.<<Ինձ հաճախ են հանդիմանում, թե գրում եմ մանրուքների մասին ,թե ես չունեմ դրական հերոսներ` հեղափոխականներ:Իսկ որտե՞ղ են դրանք: Ես ուրիշ բան եմ ուզում . ես ուզում եմ մարդկանց ասել` նայե՛ք ձեզ և տեսե՛ք, թե ինչ վատ ու ձանձրալի եք ապրում:

Կարևորն այն է , որ մարդիկ հասկանան սա, իսկ երբ հասկանան, անպայմանորեն կստեղծեն մեկ այլ, լավագույն կյանք >>: Նա գերադասում էր դանդաղ , բայց անվրեպ գործող ռումբը: Նա գերադասում էր մարդու մեջ մարդ արթնացնելուն:

Մաքսիմ Գորկին գրել է, որ երբ մեռնի Չեխովը, կմեռնի Ռուսաստանի լավագույն բարեկամներից մեկը, իսելոք, անաչառ, արդարամիտ բարեկամը, և երկիրը կցնցվի վշտից , երկար ժամանակ չի մոռանա նրան, երկար ժամանակ կշարունակի ճանաչել կյանքը ` սիրող սրտի տխուր ժպիտով լուսավորված նրա գործերով, նրա պատմվածքներով, որ ներծծված են կյանքի խորունկ իմացությամբ, մարդկանց նկատմամբ անսահման կարեկցանքով:

Այս երկնքի տակ շատ մարգարեություններ են իրագործվել: Իրագործվել է և այս մարգարեությունը:

1904թվականի հուլիսի 2-ին մահացավ ռուս հիանալի գրողը, որի ստեղծագործությունները լայն արձագանք գտան հայ ընթերցողների սրտերում:

Հայ գրականագետը գրում է. « Փոքր արձակի մեծ վարպետին ` Չեխովին են պարտական նորին մեծություն նովելը, կարճ պատմվածքը ու մանրապատումը գեղարվեստական մեծ կտավի գործերի ` վեպի ու վիպակի կողքին դրվելու համար:

Բոլորը չէ ,որ ողջունեցին նրա մուտքը: Կշտամբողների թիվը քիչ չէր: Այնպես որ ...տարիների ու իր վաստակի բարձունքից չէր կարող հաղթողի արժանապատվությամբ իր գրչակցին չասել. «Ձեր բոլորի համար ես իմ ճակատով փշրեցի փոքր պատմվածքների առաջ ցցված պատը >> : >> :

Չեխովի` Յալթայում գտնվող նրա տանը երգել է Շայապինը: Ռախմանինովի հետ Ա. Պավլովիչին հաճախ է այցելել **Ա. Սպենդիարյանը**, որը չեխովյան տեքստերով երաժշտություն է գրել:

Չեխովը բարեկամացել է նաև **Հովհ. Այվազովսկու** հետ ու նկատել ,որ այդ հանճարի հայկական ոգին զգացվում է ամեն քայլափոխում: «Այվազովսկին բարդ խառնվածք ունի և արժանի է ուշադրության: Նա իր մեջ համատեղում է և՛ գեներալի, և՛ նկարչի, և՛ հայի, և՛ միամիտ պապիկի , և՛ Օթելլոյի >>:

Մոտիկից գիտեր **Վարդգես Մուրենյանցին** , որը նկարել էր «<ՃԱՅԻ>> դեկորացիաները:

Ա.Պ.Չեխովը հայ ընթերցողների կողմից ընթերցվել է դեռևս 1890-ական թվականներից:

Նրան թարգմանաբար տպագրել են «< Մուրճը>> , «< Տարագը>>, «<Մշակը>> , «< Նոր դարը>>:

Դերենիկ Դեմիրճյանը գրում է .«Չեխովը հանդես եկավ իբրև հասարակության դաստիարակ:Նա շատ լավ գիտեր, որ մարդկային թերությունները, բնավորության այլանդակությունները, կեղծավորությունը, շահամոլությունը, նախանձը, հասարակական միջավայրի արդյունք են:

Ուստի նրա հեզնանքը ու ծաղրը ուղղված էր մարդկային արատներին, ոչ մարդուն՝ իրեն >>:

Վահան Տերյանը գրում է.«Հեշտ փառքը բախտի բան է: Հաստատուն փառքը ձեռք է բերվում արժանիքներով : Չեխովի փառքը տարեցտարի կաճի ,այնինչ ժամանակակից , երևելիներից, շատ-շատերի փառքը ավելի վաղ կխամրի, քան նրանք գերեզման կիջնեն>>:

Տերյանը իր բարեկամուհուն՝ Անթառամ Միսկարյանին գրում է .«Դու սիրում ես Չեխովին: Ես ոչ միայն սիրում եմ, այլև գտնվում եմ նրա ազդեցության տակ, որովհետև իմ մեջ գտնում եմ Չեխովին համահնչյուն զգացումներ՝ ուրախ տխրություն և թածշալի ուրախություն>>:

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ .

«Չեխովը նվիրական է մեզ համար , հավերժ կենդանի ու մոտիկ և ներկա է միշտ մեզ հետ: Նա չտեսավ իր երազների այնքան մոտալու իրագործման խիզախ ձեռնարկումները , նրա մարգարեացած հոգին լսեց նոր աշխարհի հաղթական քայլերգը:

Նա գալիք ժամանակների մարդն է , գիտության , աշխատանքի և առաջընթացի խանդավառ մունետիկը>>:

«Նախկին գրողները փոքր ծավալով պատմվածքներ՝ ,թռչունի կտուցի չափ,, համարյա չէին գրում: Եղածներն էլ հարզի չէին:

Չ-ը իր չքնաղ պատմվածքներով ստեղծեց նոր որակ և նոր ճաշակ: Նա կարողացավ քիչ բառերով շատ բան ասել. Վարպետ նկարիչների պես վրձնի մի քանի հպումով ստեղծել տրամադրություն և կոլորիտ:

Չեխովից հետո այլևս կարելի չէ գրել հին ձևով >>:

Իսահակյանը նաև գրում է.«Բուս մեծ գրողը երագում էր լինել ազատ, անկաշկանդ արվեստագետ՝ զերծ քարոզից, դիտավորյալ մտքերից:

Լինել գեղագետ՝ արվեստը արվեստի համար:Չկա մեծ արվեստ՝ առանց մտքերի, գաղափարների ,նպատակադրման:

Մեծ արվեստագետները մեծ մարգարեներ են>>: ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ

Չեխովն իր համեմատաբար կարճ կյանքի ընթացքում բավական շատ է գրել: Նրա հերոսները պաշտոնյաներ են, բժիշկներ , զեմստվոյի գործիչներ,զինվորականներ, գյուղացիներ: Չեխովի շատ գրվածքներ համաշխարհային գրականության մնայուն արժեքներից են՝ <<Տափաստանը>>, <<Չորում>>,<<Մուժիկները>>,Հիվանդանոց N6>>,<<Պատենավոր մարդը>>,<<Ճայր>>,<<Երեք քույրեր>>....

Չեխովի կարապի երգը եղավ „Հարսնացու,, պատմվածքը,որը գրել էր մահից քիչ առաջ:

Այստեղ հեղինակը կարծես ամփոփել է իրեն: Խորագին զգվանք և ասելություն հին, ճահճային ,խոզային կյանքի հանդեպ և հավատով վառ սեր՝ ապագայի հանդեպ:

Սովորաբար Չեխովին համեմատում են Մոպասանի հետ:Մոպասանը համոզված պեսիմիստ էր, անհույս ողջ մարդկության ճակատագրի հանդեպ:

Չնայած Չեխովն էլ ուներ վատատեսություն,սակայն նրա վատատեսությունը գալիս էր ռուսական մռայլ իրականությունից: Նա հավատարիմ էր լույսին ու արևին՝ ազատության,առաջընթացի, կուլտուրայի արևին, որ անպատճառ պիտի ծագի:

Ստեփան Զորյանը գրում է.

Հին հույները աստվածների մեծագույն պարզև համարում էին չափի զգացումը:Անմիջականություն և չափի զգացում. Սրանք են վարակող արվեստի նախապայմանները:

Ահա այս երջանիկ հատկություններն ունի Անտոն Չեխովի գրական արվեստը, նրա ողջ գրականությունը: Ի՛նչ նյութ էլ վերցնում է, ի՛նչ էլ գրում է այս զարմանալի վարպետը,անմիջական է, բնական, տիպական և չափի իդեալական զգացումով տոգորված:

Չեխովի այն խոսքը,թե հակիրճությունը տաղանդի քույրն է, ինքն ապացուցել է փայլուն կերպով:Նա իրոք կարողանում է կարճ խոսել երկար բաների և մեծ բովանդակության մասին. Կարճ և խոր, կարճ և տաղանդավոր:

Դրա համար էլ Լ.Տոլստոյը նրան համարում է <<արձակի Պուշկին>>:

ՆԱԲ-ԴՈՍ-ը Յուրի Վեսելովսկուն գրում է .<<Ռուս նորագույն գրողներից ես շատ եմ սիրում Չեխովին:Նրա ամենափոքր գործն անգամ բազմահատոր վեպ արժե: Միայն Չեխովն է, որ կրում է իր մեջ ռուսական պատմողական ստեղծագործության ամենալավ սովորույթները:Եվ կասկած չկա, որ ես շատ բանով պարտական եմ ռուս գրականությանը, նրա պատմողական ճյուղին>>:

ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆԸ գտնում է ,որ Չեխով գրողի մի առանձնահատկությունն էլ այն է,որ նա կյանքի թերությունների մասին խոսում և գրում է կարծես կատակելով.

Դա գալիս է նրա խառնվածքից: Ուշադիր ընթերցողը տեսնում է նաև հեղինակի մեծ սիրտը, որը ցավում է կյանքի այլանդակությունների համար, մարդկանց խեղճության համար: Որպես օրինակ հիշենք նրա <<Թախիծ>>, <<Վանկա>>, <<Վիշտը>> պատմվածքները:

Չեխովին բարձր է գնահատել նաև բանաստեղծ **ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐՅԱՆԸ**:

1910թվականին, երբ նշվում էր **ՉԵՆՈՎԻ 50**-ամյակը, **ՀՈՎՀ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ** իր զեկուցման մեջ նշում է, որ մեծ գրողը իր ամբողջ ստեղծագործությամբ նայում է ապագային:

Գալիք ժամանակների մարդ . այսպես կարելի է գնահատել նրան:

ՉԵՆՈՎՅԱՆ ԻՄԱՍՏՈՒՆ ՄՏՔԵՐ

Հացից հետո ժողովրդի համար ամենակարևորը դպրոցն է:

Այն հասարակության մեջ, ուր արհամարհվում է իսկական պերճախոսությունը, տիրապետում են բռտերի կեղծ բարեպաշտությունը կամ տափակ ճոռոմաբանությունը:

Ամեն ինչ նսեմանում է գրքերի հանդեպ:

Որքան շատ էի կարդում, այնքան գրքերն ինձ ավելի էին հարազատեցնում աշխարհի հետ, այնքան ավելի պայծառ , նշանակալից էր դառնում կյանքն ինձ համար:

Մարդկանց մեջ պետք է դաստիարակել խիղճ ու մտքի պայծառություն:

Ամենագլխավոր զարդարանքը մարդու մաքուր խիղճն է :

Ինչ վիթխարի երջանկություն է սիրել և լինել սիրված:

Երբ սիրում ես, ապա այնպիսի հարստություն ես բացահայտում քո մեջ , այնքան քնքշություն, որ նույնիսկ հավատոյ չի գալիս, որ կարողանում ես այդպես սիրել:

Սիրահարվածությունը մարդուն ցույց է տալիս, թե նա ինչպիսին պետք է լինի:

Պետք է միայն սիրով ամուսնանալ, իսկ օրիորդի հետ ամուսնանալ միայն այն պատճառով, որ նա համակրելի է , դա նույնն է , թե շուկայում գնել իրեն ոչ հարկավոր ապրանք միայն այն պատճառով , որ նա լավն է:

Պարապ կյանքը չի կարող անադարտ լինել:

Չկա ավելի քաղցր հանգիստ , քան աշխատանքով գնվածը:

Օղին սպիտակ է , բայց կարմրեցնում է քիթը և սևացնում պատիվը:

Ուրիշների տառապանքների նկատմամբ ծաղրուծանակը չպետք է ներվի:

Բժշկի մասնագիտությունը սխրանք է , այն պահանջում է ինքնագոհողություն, հոգու և դիտավորությունների մաքրություն: